



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՍՏԵԱՆ ԹԵՍԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Կիրակոսորեայ Վարժարաններու միջեւ զարգացման մրցումին ընթացքին, իր խօսքը աշակերտներուն ուղղելով՝

Դուք բոլորդ հաւատքի ախոյեաններ էք, որովհետեւ ընտրած էք Քրիստոսի ճամբան

Յայտարարեց Առաջնորդ Սրբազնան Դայր

Ծաբաթ, Մայիս 13-ի առաւտուն, Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շրջափակը կը խայտար պատանիներու քաղցր եւ կենսունակ ներկայութեամբ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազնան Յօր տնօրինութեամբ եւ Եկեղեցւոյ Յովիւներուն եւ Յոգաբարձութեանց հիլընկալութեամբ, Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Կիրակոսորեայ Վարժարաններու միջեւ զարգացման մրցում մը տեղի ունեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ երեք Եկեղեցիներու Կիրակոսորեայ վարժարաններու պատասխանատուներուն: Մրցոյթը կը վայելէր հովանաւորութիւնը Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Եպիսկոպոսներու Խորհուրդին, յանձինս՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Գերշ. Տ. Յովսեան Արքեպիսկոպոսի, Ղըպտի Առաջնորդ Գերշ. Տ. Մրապիոն Եպիսկոպոսի, եւ Ասորի Ուղղափառ Առաջնորդ Գերշ. Տ. Եղիշին Քափլան Արքեպիսկոպոսի:

Զարգացման մրցումին համար նկատի առուած էին Մատթեոսի Աւետարանի առաջին տասը գլուխները: Մրցումին կը մասնակցէին 11-ն 15 տարեկան պարման-պարմանուիիներ:

Մրցումին առաջ, բոլոր աշակերտները, հոգեւոր հայրերու առաջնորդութեամբ եւ Կիրակոսորեայ Վարժարաններու ուսուցիչներու ընկերակցութեամբ, բարձրացան Ս. Աստուածածին Եկեղեցի եւ իւրաքանչիւր Եկեղեցի իր լեզուով երգեց շարականներ ու ընթերցեց աղօթքներ: Յանուն կազմակերպիչ Յանձնախումբին՝ խօսք արտասանեց Ազգային Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի Վարիչներին Գերա. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, որ քաջալերեց բոլոր աշակերտները եւ զանոնք իրաւիրեց քրիստոնեավայել հոգիով, հաւատքով ու փոխադարձ սիրով անցընելու այս օրը:

Մրցումի ընթացքին աշակերտները բաժնուեցան խումբերու, իւրաքանչիւր խումբ բաղկացած էր զանազան Եկեղեցիներու աշակերտներէ: Մրցումը վճռական էր, եւ աշակերտներուն մօտ բացայատ էր լրջութիւնը, նիւթին հանդեպ պատրաստուածութիւնը եւ զգալի էր առաջին ելլելու ցանկութիւնը:

Մրցումի աւարտին, աշակերտները վայելեցին Ներկայութիւնը Առաջնորդ Յոգենոր Յայրերուն: Իբրեւ հիւրընկալ, Թեմիս Առաջնորդ Սրբազան Յայրը բարի գալուստ մաղթեց հոգեւոր Առաջնորդներու եւ Եկեղեցիներու հովիւներուն, եւ իր գևահատանքի ու օրինութեան խօսքը ուղղեց կազմակերպիչ Յանձնախումին եւ բոլոր ուսուցիչներուն, ապա աշակերտներուն դառնալով ըսաւ. «Դուք բոլորդ ալ հաւատքի ախոյեաններ էք, որովհետեւ ըստրեցիք Քրիստոսի ծամբան: Եւ այսօրուան ծեր այս մասնակցութիւնը՝ գրաւականն է ծեր այդ հաւատքին: Դուք կը նմանիք այս մարդուն, որ իր տունը շինեց ժայռին վրայ եւ ոչ թէ աւագին վրայ: Իսկ հաստատուն ժայռը Քրիստոս ինը է: Ամուր մնացէք Քրիստոսի վրայ»: Ապա Սրբազանը յիշատակի նուերներ փոխանցեց Առաջնորդ Յայրերուն: Այս առթիւ ողջոյնի եւ օրինութեան խօսք արտասանեցին նաեւ դաւանակից քոյր Եկեղեցիներու Առաջնորդները:

Աւարտին, բարձրագոյն միջին ապահովող խումբին անդամները իրենց բաժակները ստացան Սրբազան Յայրերու ձեռամբ, իսկ բոլոր մասնակցողները ստացան յիշատակի մետաներ: Յայտնենք, ոռ այս առիթով բաժնուեցան նաեւ յատուկ շապիկներ՝ երեք Եկեղեցիներու խորհրդանշիշներու համատեղ պատկերով:

Փակման աղօթքն ու Սրբազան Յայրերու պահպանիչն ետք, Եկեղեցւոյս առջեւ յիշատակի նկար առնուեցաւ, որմէ ետք բոլորը միատեղ խմբուեցան ու կատարեցին սիրոյ ճաշը:

Յետ միջօրեի ժամը 3-ին, աշակերներն ու իրենց դաստիարակները իրարմէ բաժնուեցան գոհունակ սրտով ու մրցումին մասնակցութեան ու յաղթանակին բերկրանքով:

ՊԱԿ

Oriental Orthodox Sunday School Bible Competition

**You are all champions of faith, for you have
chosen the path of Christ**

Declared the Prelate

On the morning of Saturday, May 13, a Bible competition took place between Sunday School students of Oriental Orthodox Churches under the direction of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, at the "Armenak Der Bedrossian" Hall of St. Mary's Church in Glendale. The event, which was organized by the directors of the Sunday Schools, was held under the auspices of the H.E. Archbishop Moushegh Mardirossian, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion, Prelate of the Coptic Orthodox Church, and H.E. Archbishop Mor Eugene Kaplan, Prelate of the Syriac Orthodox Church.

The competition encompassed the first ten chapters of the Gospel of Matthew. Participating were 11 to 15 year old Sunday School students.

Prior to the competition, the students, led by the Prelates and accompanied by their directors, gathered inside St. Mary's Church where each Church sang hymns and

read prayers in its respective language. On behalf of the organizing committee Very Rev. Fr. Muron Aznikian, co-director of the Prelacy Christian Education Department, delivered encouraging remarks to the students.

At the start of the competition the students split into groups, with each group being comprised of students from the various churches. During the competition the preparedness of the students on the subject matter and their eagerness to win first place was apparent.

Following the competition the host Prelate Archbishop Mardirossian welcomed the Prelates and clergy members and commended the organizing committee and all the directors and staff of the Sunday Schools. Turning to the students he said, *"You all are champions of faith, for you have chosen the path of Christ. Your participation today is evidence of that faith. You are like the man who built his house on a rock and not on sand. That solid rock is Christ. Stand firm on that rock."*

Later on the Prelate presented mementos to the guest Prelates, followed by greetings and blessings by the Prelates of the sister churches.

At the end of the event, medals were given to all participants and trophies to the winners. There were also t-shirts handed out to all participants with the logos of the churches.

Following the closing prayer and "Bahbanich" a group picture was taken in front of the church, after which the students enjoyed lunch. At 3:00 p.m. the students and directors departed with joy and triumph in their hearts.